ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱԳԴԱ ԱՐՄԵՆԻ ԱՐՍԵՆՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԻԳ.00.02 –«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2020

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АРСЕНЯН МАГДА АРМЕНОВНА

СТАНОВЛЕНИЕ ПРЕДПОСЫЛОК ПАРЛАМЕНТСКОЙ КУЛЬТУРЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 – “Политические институты и процессы, международные отношения”

АВТОРЕФЕРАТ

Ереван-2020

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում:

Գիտական ղեկավար՝ քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ Աշոտ Սեյրանի Ալեքսանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ Վարդան Կորյունի Աթոյան

քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ Էդգար Անդրանիկի Քալանթարյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2020 թ. դեկտեմբերի 18-ին, ժամը 13:00-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ-ի Քաղաքագիտություն 056 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն է՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թ. նոյեմբերի 7-ին:

056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոց. Վ. Ս. Պետրոսյան

Тема диссертации утверждена в Академии государственного управления Республики Армения.

Научный руководитель: доктор политических наук Ашот Сейранович Алексанян

Официальные оппоненты: доктор политических наук Вардан Корюнович Атоян

кандидат политических наук Эдгар Андраникович Калантарян

Ведущая организация: Российско-Армянский (Славянский) университет

Защита состоится 18 декабря 2020 г. в 13:00 часов на заседании действующего в ЕГУ РА специализированного совета 056 Политические науки ВАК РА. Адрес: РА, Ереван 0025, ул. А. Манукяна 1.

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.

Автореферат разослан 7 ноября.

Научный секретарь специализированного совета,
кандидат исторических наук, доцент В. С. Петросян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական մշակույթի կայացման գործընթացի ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է խորհրդարանի՝ որպես հանրային իշխանության գերակա ինստիտուտի կողմից նոր հումանիզմի սկզբունքների կիրառման և «անցյալ-ներկա-ապագա» եռաչափության հենքի վրա ապագային միտված գործառութային արդյունավետության ապահովման հրամայականով: Վերջինիս արդիականությունը պայմանավորված է նաև Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից մարտի 11-ին հայտարարված նոր տեսակի կորոնավիրուսի (COVID-19) համաշխարհային համաճարակով:

Արդի խորհրդարանական մշակույթի զարգացման պայմաններում, COVID-19-ը քաղաքական ժամանակի և տարածության մեջ ցույց տվեց, որ այն կարող է դառնալ ճակատագրական թեստավորում ոչ միայն կենսաապահովման, այլև՝ հասարակության և պետության «իմունային համակարգի» կենսունակության գնահատման տեսանկյունից: Համաշխարհային համաճարակը, և ոչ միայն, առհասարակ, ցանկացած ճգնաժամային իրավիճակ ի հայտ է բերում սոցիալ-քաղաքական համակարգի բոլոր խոցերը, որոնք պայմանավորում են պետական կառավարման մակարդակով ճգնաժամի շուտափույթ հաղթահարման և հետևանքների կառավարման կարողությունը: Այստեղ է, որ բոլոր զարգացող և համախմբված ժողովրդավարություններում խորհրդարանն ունի շատ կարևոր առաքելություն, այն է՝ մի կողմից, փոխզսպել, հակակշռել և ուղղորդել կառավարության գործունեությունը, մյուս կողմից՝ ապահովել հասարակության կարգապահ վարքագիծը միմիայն ժողովրդավարական խաղի տիրույթներում:

«Խորհրդանական մշակույթ» հասկացության էությունը, կառուցվածքը, գործառույթները և ժողովրդավարական զարգացման տարբեր հետագիծ ունեցող երկրներում դրա զարգացման առանձնահատկությունները վեր հանելու համար այն դիտարկվել է «պառլամենտարիզմ», «քաղաքական մշակույթ», «սահմանադրական մշակույթ», «անցումագիտություն», «քաղաքական արդիականացում» և «ժողովրդավարական համախմբում» իրավաքաղաքական կատեգորիաների տեսական ու գործառական հետազոտությունների համատեքստում: Հետազոտության տեսական շրջանակի այս ծավալը հնարավորություն է տալիս պարզել խորհրդարանական մշակույթի քաղաքակրթական, արժեքաբանական ու ինստիտուցիոնալ չափումները, որոշակիացնել խորհրդարանական մշակույթի զարգացման ստատուս քվոն և ապա մշակել *ապագային միտված (future-focused organizational culture) զարգացման ռազմավարություն՝ այն դիտարկելով որպես խորհրդարանական մշակույթի կայացման և ժողովրդավարական համախմբման հրամայական:*

Խորհրդարանական մշակույթը, լինելով ժողովրդավարական վարչակարգերի, թերևս, ամենակարևոր չափման գործիքներից մեկը, մատնացույց է անում ոչ միայն ներկայացուցչական ինստիտուտների գործունեության մշակութային մոդելների կերպափոխման էվոլյուցիան, այլև՝ *ժողովրդավարության*

որակի բարձրացման նկատառումներով չափելի է դարձնում 1) հասարակության ներուժը, 2) քաղաքացիների և քաղաքական ընտրանու ինտեգրման աստիճանը քաղաքական գործընթացներին, 3) քաղաքական ընտրանու և զանգվածների միջև երկխոսության որակը, ինչպես նաև՝ 4) քաղաքականության դերակատարների կամքը ժողովրդավարական վարչակարգը՝ որպես «միակ խաղը քաղաքում» (“the only game in town”) պահելու տեսանկյունից:

Հայաստանի Հանրապետության (այսուհետ նաև՝ ՀՀ) նորագույն պատմության մեջ՝ մի կողմից սահմանադրական և քաղաքական մշակույթների, մյուս կողմից՝ ինստիտուցիոնալ փոխակերպումների ուսումնասիրությունը վկայում է ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացներում անցումագետներ Տ.Լ.Կարլի և Ֆ.Շմիտերի կողմից տարբերակված *«պարտադրման», «պակտային», «բարեփոխման», «հեղափոխական» փուլերի ձախողման մասին: Սույն աշխատանքում խորհրդարանական մշակույթի ժողովրդավարացման տեսանկյունից ելակետային ենք համարել քաղաքական համաձայնության կամ պակտի կնքումը քաղաքական ընտրանու ինտեգրման և շարունակականություն ապահովող համագործակցության մշակույթի ձևավորման նկատառումներով:*

Սիլլոգիզմն առ այն, որ 2015 թվականի դեկտեմբերի 6-ին ՀՀ-ում տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումների հանրաքվեի արդյունքների համաձայն, անցումը խորհրդարանական կառավարման մոդելի կհանգեցնի ժողովրդավարության որակի բարձրացմանը, և հետևաբար խորհրդարանական մշակույթի կայացմանը, ժամանակի և տարածության մեջ «ճեղքեր տվեց»՝ մատնանշելով արժեքաբանական և ինստիտուցիոնալ գործոնների, ինչպես նաև *ԽՄ սուբյեկտիվ չափորոշիչների, այն է՝ քաղաքացիների տեսլականը («citizens’ perspective»)* սիմբիոտիկ ուսումնասիրության անհրաժեշտությունը:

ՀՀ-ում խորհրդարանական մշակույթի (այսուհետ նաև՝ ԽՄ) կայացման գործընթացը դիտարկել ենք նեոքաղաքականության («քաղաքականություն շարունակական ներքնայնացման և կերպափոխման հոլովույթում» («politics in a state of adaptation and change») համատեքստում: Այս տեսանկյունից աշխատանքում անդրադարձել ենք հետխորհրդային արժեքաբանական, սահմանադրաիրավական և ինստիտուցիոնալ իներցիային՝ քննարկելով դրա ազդեցությունը պետական իշխանության ինստիտուցիոնալացման բոլոր փուլերում: Այս առումով աշխատանքում մեր կողմից հատկապես արդիական է համարվել «էնդոգեն» և «էկզոգեն», ինչպես նաև «էկզոգեն կվազի չափորոշիչների» տարբերակման անհրաժեշտությունը:

ՀՀ-ում ԽՄ կայացման գործընթացն ուսումնասիրելով սոցիալ-քաղաքական համակարգի ժողովրդավարական փոխակերպումների հոլովույթում՝ կարևորվել են խորհրդարանական մշակույթի կայացման *կառուցվածքային (քաղաքակրթական, արժեքաբանական և մշակութային) և դերային (ինստիտուցիոնալ) նախադրյալները:*

Ատենախոսության թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Արդի քաղաքական գիտության մեջ ԽՄ հասկացության մասին հետազոտությունները համակարգային և բազմակողմանի լինելու տեսանկյունից համալրման կարիք ունեն, ինչը հնարավորություն կստեղծի ամբողջական պատկերացում ունենալ ԽՄ

փիլիսոփայական, քաղաքագիտական, սոցիոլոգիական և լեզվամշակութաբանական դրսևորումների վերաբերյալ:

Ժողովրդարական անցման գործընթացներում հետազոտության համատեքստում ուսումնասիրվել են անտիկ (Դրակոնտ, Սոլոն, Սոկրատես, Պլատոն, Արիստոտել), վերածննդի (Ն. Մաքիավելի, Թ. Հոբս, Ջ. Լոկ, Շ. Լ. Մոնտեսքյո, Ժ. Ժ. Ռուսո), լուսավորության (Ի. Կանտ, Ֆ. Հեգել, Ի. Բենտամ, Ջ. Ս. Միլ) մտածողները: Նոր (Ռ. Արոն, Բ. Ի. Չիչերին, Մ. Մ. Կովալովսկի և նորագույն ժամանակների (Գ. Ալմոնդ, Ս. Վերբա, Լ. Պայ, Ռ. Ինգլհարտ, Խ. Լինց, Ա. Ստեփան, Մ. Գոլդոնի, Ռ. Դալ, Հ. Լասուել, Մ. Դյուվերժե և այլք) մտածողներն իրենց աշխատություններում անդրադարձել են խորհրդարանական մշակույթի կառուցվածքային բաղկացուցիչ տարրերի, ինչպես նաև ԽՄ զարգացման առանձին ասպեկտների ուսումնասիրությանը:

ԽՄ-ն արտացոլում է սահմանադրական և քաղաքական մշակույթների հանրագումարը՝ անցյալի փորձի վրա կանխորոշելով ներկայի և ապագայի քաղաքական գործունեության կենսաձևը[1]:

«Խորհրդարանական մշակույթ», «սահմանադրական մշակույթ» և «քաղաքական մշակույթ» կատեգորիաների փոխազդեցությունը դիտարկվել է վարքաբանական, վերաբերմունքային և քաղաքական սահմանադրագիտության հայեցակարգային մոտեցումների շրջանակում: Այս առումով ուշադրության են արժանի Կ. Յունգի[2], Գ. Ալմոնդի և Ս. Վերբայի[3], Լ. Պայի[4], Ռ. Ինգլհարտի[5], Ք. Վելցելի[6],

---

[1] Տե՛ս **Зимин В.А.** Политическая культура как объект философского анализа. Философские науки (1); 2013. стр. 8-15. https://www.phisci.info/jour/article/download/839/793 (Дата доступа: 19.03.2020)

[2] Տե՛ս **Lewin N. A.** Jung on War, Politics and Nazi Germany: Exploring the Theory of Archetypes and the Collective Unconscious. Karnac Books Ltd. London. 2009, pp. 104-105.

[3] Տե՛ս **Алмонд Г., Верба С.** Гражданская культура: политические установки и демократия в пяти странах. М., 2014, стр. 28-30; **Алмонд Г., Пауэлл Дж., Стром К., Далтон Р.** Сравнительная политология сегодня: мировой обзор / Под ред. М.В. Ильина, А.Ю. Мельвиля. М., 2002, стр. 104-105.

[4] Տե՛ս **Pye L.W.** The Non-Western Political process. The Journal of Politics. Vol. 20, No. 3. The University of Chicago Press (Aug., 1958), pp. 468-486; **Pye L.W., Verba S.** Political Culture and Political Development. Princeton University Press, 1965, pp. 10-11

[5] Տե՛ս **Инглхарт Р.** Постмодерн: меняющиеся ценности и изменяющиеся общества. Полис. – 1997, № 4, стр. 6–23; **Inglehart R. F.** Cultural Evolution: People's Motivations Are Changing and Reshaping the World. Cambridge University Press, 2018, pp. 201-216.

[6] **Инглхарт Р., Вельцел К.** Развитие и демократия: что мы знаем о модернизации? Университетская трибуна. Социология 1/2011. http://elib.bsu.by/bitstream/123456789/6361/1/06%20%D0%98%D0%9D%D0%93%D0%9B%D0%A5%D0%90%D0%A0%D0%A2.pdf (Дата доступа: 19.03.2020)

Խ. Լինցի և Ա. Ստեփանի[7], Մ. Գոլդոնիի[8] և աշխատությունները: Խորհրդարանական մշակույթի գործառութային արդյունավետության ապահովման տեսանկյունից ուշագրավ է հատկապես Խ. Լինցի և Ա. Ստեփանի դիտարկումն առ այն, որ խորհրդարանը ենթադրում է հանրային և քաղաքական տարածությունների զուգամիտում հանուն հասարակության ներուժի զարգացման և պետական ապարատի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու օրինական իրավունքի իրացման:

ԽՄ հասկացության շուրջ հետազոտությունների հիմքում հիմնականում դրված է քաղաքագիտական մոտեցումը, համաձայն որի խորհրդարանական մշակույթը հարում է առավել ընդգրկուն՝ «քաղաքական մշակույթ» հասկացությանը: Այս տեսանկյունից ուշագրավ են Մ. Ֆուկոյի[9], Կ. Դոյչի[10], Դ. Իստոնի[11], Յ.

---

[7] Տե՛ս **Լինց Խ., Ստեփան Ա.** Ժողովրդավարությանն անցնելու և ժողովրդավարության կայացման խնդիրները. Հարավային Եվրոպա, Հարավայի Ամերիկա և հետկոմունիստական Եվրոպա: Եր.: Կովկասի ինստիտուտ, 2011, էջ 24-26:

[8] Տե՛ս **Goldoni M.** Two Internal Critiques of Political Constitutionalism. 2012. Oxford University Press on behalf of New York University School of Law. https://academic.oup.com/icon/article/10/4/926/646272 (Assessed 19.06.2020)

[9] Տե՛ս **Фуко М**. Воля к истине: по ту сторону знания, власти и сексуальности. Работы разных лет., 1996, с. 193 // Фуко М. Власть и знание // Фуко М. Интеллектуалы и власть: Избр. Полит. Статьи, выступления и интервью. М., 2002, с. 290.

[10] Տե՛ս **Alker R. H.** The powers and pathologies of networks: insights from political cybernetics of Karl W. Deutsch and Norbert Wiener. European Journal of International relations; 17 (2), pp. 351-378 http://citeseerx.ist.psu.edu/viewdoc/download?doi=10.1.1.925.4060&rep=rep1&type=pdf (Assessed 20.04.2020) // **Deutsch K W.** The Nerves of Government: Models of Political Communication and Control. (1966b)
New York: The Free Press of Glencoe. (Assessed 19.06.2020)

[11] Տե՛ս **Easton D.** An Approach to the Analysis of Political Systems. World Politics, Vol. 9, № 3.. (Apr., 1957), pp. 383-400. http://online.sfsu.edu/sguo/Renmin/June2_system/Political%20System_Easton.pdf (Assessed 19.06.2020)

Հաբերմասի[12], Պ. Ռոզենվելլոնի[13], Է. Ֆրոմի[14], Ժ. Նայի[15], Ս. Կելլերի[16], Մ. Շեպհարդի[17], Յ. Գալթունգի[18], Ի. Վ. Սամարկինայի[19], Ե. Բ. Շեստոպալի[20] , Ն. Պ. Լեոնենկովայի[21], Ա.

---

[12] Տե՛ս **Хабермас Ю.** Отношения к миру и рациональные аспекты в четырех социологических понятиях действия // "Социологическое обозрение". Пер. с немецкого: **Тягунова Т**. Том 7. 2008, №1, стр. 3-24. https://sociologica.hse.ru/data/2011/03/04/1211598779/soc_oboz_7_1.pdf (Дата доступа: 19.06.2020) // **Gerard Delanty**. Habermas and post-national identity: theoretical perspectives on the conflict in Northern Ireland, Department of Sociology, the University of Liverpool, Published online, 2007. https://www.academia.edu/7779866/Habermas_and_PostNational_Identity_Theoretical_Perspectives_on_the_Conflict_in_Northern_Ireland (Assessed 19.06.2020) // **J. Habermas.** The Structural Transformation of the Public Sphere: An Inquiry into a Category of Bourgeois Society. Cambridge, MA: MIT Press, 1991.http://courses.ischool.berkeley.edu/i218/s15/Habermas_STBPS_I.Intro.pdf (Assessed 19.06.2020)

[13] Տե՛ս **Rosanvallon P.** Society of Equals. Translated by Arthur Goldhammer. Harvard University Press, USA, 2013, pp. 12-75 // P. Rosanvalllon. How to Create a Society of Equals: Overcoming Today's Crisis of Inequality. Foreign Affairs, 2016. https://www.foreignaffairs.com/articles/2015-12-14/how-create-society-equals (Assessed 19.06.2020)

[14] Տե՛ս **Фромм Э.** Анатомия человеческой деструктивности. М.: АСТ-ЛТД, 1998, стр. 481-483.

[15] Տե՛ս **Nye Jr. J. S.**, Hard, Soft, and Smart Power // The Oxford Handbook of Modern Diplomacy (Ed. by **A. F. Cooper, J. Heine,** and **R. Thakur**). Oxford University Press, 2013, pp. 559-576; **Joseph Nye** on Smart Power // Harvard Kennedy School Insight Interview (July 3, 2008) https://www.belfercenter.org/publication/joseph-nye-smart-power (Accessed 12.03.2020)

[16] Տե՛ս **Keller S**. Beyond the Ruling Class: Strategic Elites in Modern Society. Routledge, 2017, pp. 4-22.

[17] Տե՛ս **Shephard M. P.** Term Limits: Evidence of Careerism and Socialization // Journal of Legislative Studies, 2, 1996, p. 262.

[18] Տե՛ս **Galtung J.** Cultural violence. Journal of Peace Research, Vol. 27, №3. (Aug., 1990), pp. 291-305. https://www.galtung-institut.de/wp-content/uploads/2015/12/Cultural-Violence-Galtung.pdf (Accessed 12.03.2020)

[19] Տե՛ս **Самаркина И. В.** Политическая ресоциализация: актуальный контекст исследования. "Человек. Сообщество. Управление". №4, 2006, стр. 139-147 http://chsu.kubsu.ru/arhiv/2006_4/2006-4_Samarkina.pdf (Дата доступа: 19.06.2020)

[20] Տե՛ս **Шестопал Е. Б.** Политическая социализация и ресоциализация в современной России. При поддержке РФФИ, исследовательский грант, 2012. http://ecsocman.hse.ru/data/2012/09/21/1251345259/00 (Дата доступа: 19.06.2020)

[21] Հղումն ըստ՝ **Ковбенко Л., Колесников В.** Парламентская культура как предмет научно-практического анализа. Власть. 2008. № 5; стр. 77-79 // **Леоненкова Н. П.** Парламентская культура: проблема формирования и развития (на примере Республики Адыгея). Материалы научной конференции «Наука-2002». Майкоп: Изд-во АГУ, 2002. // **Леоненкова Н. П**. Формирование парламентской культуры в российском обществе… стр. 8 // **Леоненкова Н.П**. Парламентская культура: история и современность. Ученые записки. Донской юридический институт. Т. 23. Ростов н/Д.: 2004, с. 149.

Ի. Սոլովյովի[22], Ն. Ա. Կոմլյովայի[23], Ի. Բ. Գրադինարի[24], Վ. Ն. Կոլեսնիկովի[25], Ա. Ի. Շերբինինի և Ն. Գ. Շերբինինի [26], Ֆ. Բուռլացկու և Ա. Գալկինի [27], Ե. Լ. Սիսոլյատինայի [28], աշխատանքները, որտեղ խորհրդարանական մշակույթի տեսական-գաղափարական հիմքում դիտարկվել են իշխանության մշակույթի հումանիզացմանն ուղղված քաղաքական սոցիալականացման և վերասոցիալականացման, ներկայացուցչականության, հաղորդակցության, սոցիալ-քաղաքական կայունության գործառույթների ապահովումը:

ԽՄ վարքաբանական մոդելների ուսումնասիրությունը, «խորհրդարանական էթիկա» և «պատգամավորական էթիկա» կատեգորիաների տարաջանտումը, ինչպես նաև խորհրդարանական սոցիալականացման համատեքստում վարքաբանական, օրենսդրական և գործառական

---

[22]Տե՛ս **Соловьев А.И.** Российский парламент: динамика в новейшей политической истории и перспективы развития // Власть. 2006. No3. стр. 20-25.

[23]Հղումն ըստ՝ **Назарова Ю. В.** Аксиология парламентской культуры. 09.00.13-Философская антропология, философия культуры. Диссертация на соисание ученой степени доктора философский наук. Тула, 2014. https://kursksu.ru/documents/diss_list/%D0%9D%D0%B0%D0%B7%D0%B0%D1%80%D0%BE%D0%B2%D0%B0.pdf (Дата доступа: 19.06.2020) // **Комлева Н. А.** К вопросу об определении понятия «культура властвования». Деп. в ИНИОН АН СССР. № 664680 от 11.12.80.

[24]Հղումն ըստ՝ **Ширинянц А.А**. Политическая культура: смысл и методологическое значение категории. https://www.portalslovo.ru/history/35094.php?ELEMENT_ID=35094&PAGEN_2=5&amp%3BPAGEN_2=3&PAGEN_1=6 (Дата доступа: 19.06.2020) // **Градинар И.** Политическая культура: мировоззренческое измерение. Ч. 1. СПб., 1966. стр. 5–6

[25]Տե՛ս **Колесников В.Н.** Функциональная ценность парламентской культуры //Вестник Санкт-Петербургского Университета. Сер. 6. 2010. Вып.2, стр. 33–40. https://cyberleninka.ru/article/v/funktsionalnaya-tsennost-parlamentskoy-kultury (Дата доступа: 19.06.2020)

[26]Տե՛ս **Щербинин А. И., Щербинина Н. Г.** Парламентская культура: коммуникативный аспект. Вестник Томского государственного университета. История. 2013. №5 (25). http://cyberleninka.ru/article/n/parlamentskaya-kultura-kommunikativnyy-aspekt (Дата доступа: 19.06.2020)

[27]Տե՛ս **Бурлацкий Ф. М., Галкин А. А.** Современный Левиафан: Очерки политической социологии капитализма /. – Москва: Мысль, 1985, стр. 366-381.

[28] Տե՛ս **Сысолятина Е. Л**. Парламентская культура в контексте социально-политических преобразований. 2015. Департамент политологии и социологии Уральского Федерального Университета имени первого президента России Б.Н. Ельцина, г. Екатеринбург. http://elar.urfu.ru/bitstream/10995/32356/1/klo_2015_207.pdf (Дата доступа: 19.06.2020)

սոցիալականացման մոդելները վերլուծվել են Դ.Փ. Թոմփսոնի[29], Է. Յ. Բատալովի[30], Յ. Հայզինգայի[31], Մ. Ռաշի և Ֆ. Գիդինգսի[32], Փ. Նորիսի[33] աշխատություններում:

ԽՄ եվրոպական փորձի ուսումնասիրության համար օգտվել ենք Փ. Այհելայնենի, Կ. Իլի և Կ. Պալոնենի[34] և Ա. Զ. Մանֆրեդի[35], Ռ. Ինգլհարտի և Կ. Վելցելի[36] աշխատություններից:

Աշխատանքում ԽՄ ինստիտուցիոնալ կայացման շրջանակներում անդրադարձ է կատարվել քաղաքական համաձայնությունների/կոալիցիաների ձևավորման և խորհրդարանական ինստիտուտների գործառութային արդյունավետության տեսանկյունից միջազգային փորձառության ուսումնասիրությանը:

Հետազոտության մեջ քաղաքական համաձայնությունների/կոալիցիաների ուսումնասիրության շրջանակներում քննարկվել են Շվեդիայի և Լիտվայի օրինակները՝ այս համատեքստում դիտարկելով ինչպես Թ. Բերգմանի և Ն. Էյլոթի գիտական աշխատանքները և հոդվածները[37], այնպես էլ մի շարք իրավական

---

[29]Տե՛ս **Thompson D. F.** The Possibility of Administrative Ethics. Public Adminstration Review, Vol. 45, № 5. (Sep.-Oct., 1985), pp. 555-561. https://blogs.commons.georgetown.edu/ppol-560-fall2011/files/Thompson-Possibility-of-Administrative-Ethics.pdf (Assessed 19.06.2020)

[30]Տե՛ս **Баталов Э. Я.** Советская полическая культура (к исследованию распадающейся парадигмы). Гражданское общество и правовое государство. 1994 г. http://ecsocman.hse.ru/data/219/178/1217/004_GRAZhDANSKOE_OBShchESTVO_I_PRAVOVOE_GOSUDARSTVO.pdf (Дата доступа: 19.06.2020)

[31]Տե՛ս **Хейзинга Й.** Игровой элемент современной культуры // Политические исследования, № 5. 1991, стр. 202–205. http://www.polisportal.ru/files/File/puvlication/Starie_publikacii_Polisa/H/1991-5-23-Heisinga_Igrovoy_element_sovremennoy_kulturi.pdf (Дата доступа: 19.06.2020)

[32]Տե՛ս **Rush M., Giddings P.** Parliamentary Socialisation: Learning the Ropes of Determining Behaviour. 2011. Palgrave Macmillan, pp. 28-195.

[33] Տե՛ս **Norris P.** Electoral engineering. Voting Rules and Political Behavior. Cambridge University Press. 2009, pp. 238-246

[34] Տե՛ս **Ihalainen P., Illie C., Palonen K**. Parliament and Parliamentarism: A Comparative History of a European Concept. New York: Berghahn Books, 2016, pp. 50-61.

[35]Տե՛ս **Манфред А. З.** Великая французская революция. Издательство “Наука”. Москва. 1983. стр. 13-33.

[36] Տե՛ս **Инглхарт Р., Вельцел К.** Развитие и демократия: что мы знаем о модернизации? Университетская трибуна. Социология 1/2011. http://elib.bsu.by/bitstream/123456789/6361/1/06%20%D0%98%D0%9D%D0%93%D0%9B%D0%A5%D0%90%D0%A0%D0%A2.pdf (Дата доступа: 19.06.2020)

[37] Տե՛ս **Aylott N.** Let's Discuss This Later: Party Responses to Euro-Division in Scandinavia. Party Politics 8. 2002, pp 441-461; **Aylott N., Bergman T.** Almost in Government, but Not Quite: the Swedish Greens, Bargaining Constraints and the Rise of Contract Parliamentarism. In ECPR joint sessions of workshops, Uppsala 2004 Apr. https://ecpr.eu/Filestore/PaperProposal/68014d58-8139-4070-879c-8f54a5512446.pdf (Assessed 19.06.2020); **Bergman T.** Formation Rules and Minority Governments. European Journal of Political Research 23. 1993, pp. 55-66.

ակտեր[38]: Քաղաքական համակարգում կուսակցական համակարգի զարգացման և հատկապես սահմանադրաիրավական առումով կուսակցությունների գործառութային որոշակիացման, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողության մեխանիզմների և գործիքների արդյունավետության տեսանկյունից որպես մոդելային օրինակ է քննարկվել Գերմանիայի խորհրդարանական ժողովրդավարության փորձառությունը: Այս առումով ուսումնասիրության են ենթարկվել հետևյալ սահմանադրաիրավական ակտերը[39]:

ՀՀ խորհրդարանական մշակույթի պատմականության, գործառական չափումները և ինստիտուցիոնալ կառուցվածքի կերպափոխման փուլերն ուսումնասիրելու համար տեսական հիմք են հանդիսացել Մ. Մարգարյանի, Ա. Ալեքսանյանի, Ա. Մարգարովի, Տ. Թորոսյանի, Գ. Պետրոսյանի, Վ. Պետրոսյանի, Գ. Քեռյանի, Գ. Հարությունյանի, Ա. Մանասյանի, Ա Հակոբյանի, Ա. Մովսիսյանի, Հ. Հակոբյանի գիտական աշխատանքներն [40] : Բացի դրանից, Հայաստանում

---

[38] Accord between the political parties represented in the Seimas of the Republic of Lithuania on strategic guidelines for the foreign, security and defence policy of the Republic of Lithuania for 2014-2020 (29 March 2014). https://www.lrs.lt/sip/portal.show?p_r=8929&p_k=2 (Assessed 19.06.2020)

[39] Տե՛ս **Basic Law for the Federal Republic of Germany**. https://www.btg-bestellservice.de/pdf/80201000.pdf (Assessed 19.06.2020); **Act on Political Parties** (Parteiengesetz-PartG, of July 1967). Translated by the Translation Service of the Federal Ministry of the Interior. P. 1 https://www.bundestag.de/blob/189734/2f4532b00e4071444a62f360416cac77/politicalparties-data.pdf (Assessed 19.06.2020); Budget Committee: Role and Responsibilities. https://www.bundestag.de/en/committees/a08 (Assessed 19.06.2020)

[40] Տե՛ս **Ա. Ալեքսանյան.** Դեմոկրատիայի ցիվիլիարխիկ չափման մասին. «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2019 № 2 (29), էջ 52-60 http://ysu.am/files/06A_Aleksanyan-1564133834-.pdf (Վերջին դիտումը՝ 20.04.2020 թ.); // Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի ռեգրեսիոն վերլուծությունը | Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի միտումները մարդու իրավունքների և ժողովրդավարացման չափումներում. Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա, 9.7, 2017, էջ 258-259 // Քաղաքացիական հասարակություն, //«Քաղաքագիտություն», Եր., Երևանի համալս. հրատ.,2006, էջ 311-329; **Ա. Մարգարով.** Институциональная трансформация в Армении в 1990-2010 гг. «Բանբեր Երևանի համալսարանի», «Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն» 135.6, Երևան 2011թ., էջ 35-47 http://ysu.am/files/05A_Markarov.pdf (Վերջին դիտումը՝ 20.04.2020 թ.); **Տ. Թորոսյան.** Հետխորհրդային տրանսֆորմացիա. պարադիգմի վերանայում կամ երկրորդ փուլ. Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 2. 2005, էջ 3-12 http://lraber.asj-oa.am/136/1/2005%2D2(3).пдф (Վերջին դիտումը՝ 20.04.2020 թ.); **Գ. Պետրոսյան.** Հայոց ազգային ժողովի և հայոց ազգային խորհրդի ստեղծման պատմությունից (1917թ. փետրվար-հոկտեմբեր) |Հայագիտության հարցեր հանդես 2(8), ԵՊՀ հրատ., Երևան. 2016, էջ 51-58 http://ysu.am/files/Hayagit._harcer.пдф (Վերջին դիտումը՝ 20.04.2020 թ.); **V. Petrosyan, T. Mkrtchyan.** Integration of Transcaucasia: Continued Failure and Hope. The Geopolitical Scene of the Caucasus: A Decade of Perspectives. Turkish Policy Quarterly. Istanbul. 2013, pp. 179-199 http://ysu.am/files/V.Petrosyan.pdf (Assessed 19.06.2020); **Գ. Քեռյան.** Կուսակցությունների տիպավորման գաղափարաքաղաքական սկզբունքի կիրառման հարցի շուրջ. «Բանբեր Երևանի համալսարանի», «Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն» 144.6,

խորհրդարանական մշակույթի կայացման հիմնախնդրի շուրջ քաղաքական դիսկուրսը ուսումնասիրելու համար հեղինակի կողմից անցկացվել են հարցազրույցներ քաղաքական գիտությունների դոկտորներ Ա. Ալեքսանյանի և Մ. Մարգարյանի, ինչպես նաև քաղաքական գործիչների հետ:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է պարզել խորհրդարանական մշակույթի քաղաքակրթական, արժեքաբանական ու ինստիտուցիոնալ չափումները, որոշակիացնել խորհրդարանական մշակույթի զարգացման ստատուս քվոն և ապա մշակել *ապագային միտված (future-focused organizational culture) զարգացման ռազմավարություն՝ այն դիտարկելով որպես խորհրդարանական մշակույթի կայացման և ժողովրդավարական համախմբման հրամայական:*

Այս նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրվել են «խորհրդարանական մշակույթ» հասկացության տեսական հիմքերը՝ հստակեցնելով դրա բովանդակության և ծավալի հարաբերակցությունը «պառլամենտարիզմ», «քաղաքական մշակույթ», «սահմանադրական մշակույթ», «անցումագիտություն», «քաղաքական արդիականացում» և «ժողովրդավարական համախմբում» իրավաքաղաքական կատեգորիաների տեսական ու գործառական հետազոտությունների

2014 (№ 3), էջ 47-59 http://ysu.am/files/06G_Keryan.pdf (Վերջին դիտումը՝ 20.04.2020 թ.); **Մ. Մարգարյան.** Պատմականությունը որպես պետության ինքնիշխանության արդիականացման բաղադրիչ, «ՎԷՄ» համահայկական հանդես, 2018 թիվ 2, էջ 10-27 // Քաղաքական արդիականացման քաղաքակրթական չափումը՝ որպես ռազմավարական կառավարման ապահովման հիմք, https://mmmargaryan.wordpress.com/2018/03/30 (Վերջին դիտումը՝ 20.04.2020 թ.); ՀՀ քաղաքական մշակույթի ժողովրդավարացման հիմնախնդիրը խորհրդարանական կառավարման պայմաններում, https://mmmargaryan.wordpress.com/2017/06/21 (Վերջին դիտումը՝ 20.04.2020 թ.); **Գ. Հարությունյանի**, Սահմանադրականության արդի մարտահրավերները // «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2018 № 3 (27), էջ 7-13, http://ysu.am/files/02G_Harutyunyan-1548838714-.pdf (Վերջին դիտումը՝ 20.04.2020 թ.); **Harutyunyan G.** Role and Place of the Rule of Law in the Social Behaviour of an Individual and a Citizen | Materials of conference devoted to 80 th of the Faculty of Law of the Yerevan State University: Yerevan, YSU Press, 2014, pp. 68-75, http://ysu.am/files/Gagik_Harutyunyan.pdf (Assessed 19.06.2020); **Manasyan A.** The Issues of Differentiation of Constitutional Policy from Ongoing Politics. Political Science Studies. 52, 2019. http://www.studiapolitologiczne.pl/The-Issues-of-Differentiation-nof-Constitutional-Policy-from-Ongoing-Politics,115426,0,2.html (Assessed 14.03.2020); **Ա. Հակոբյան**. Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանական կառավարման փորձը, «ՎԷՄ» համահայկական հանդես, 2015, թիվ 4 (52), էջ 22-40; **Արտակ Մովսիսյան**. Աշխարհաժողով. Հին Հայաստանի բարձրագույն խորհրդակցական ժողովը՝ երկրի դասային համերաշխության երաշխավոր.; «21-րդ դար» գիտական հանդես. 2006 թ., https://cyberleninka.ru/article/v/ashkharazhohov-vysshij-soveshchatelnyj-sovet-drevnej-armenii-kak-garant-soslovnogo-soglasiya-strany (Վերջին դիտումը՝ 20.04.2020); **Հ. Հակոբյան**. Պառլամենտը և պառլամետարիզմը Հայաստանի Հանրապետությունում: Եր., 2007, էջ 119:

համատեքստում, ինչի արդյունքում «խորհրդարանական մշակույթ» հասկացության մասին պատկերացումներն առավել համակարգային բնույթ են ստանում:

- Դիտարկվել են «խորհրդարանական մշակույթ» հասկացության քաղաքական սոցիալականացման չափումները՝ հստակեցնելով «փափուկ ուժի» սոցիալականացման և վերասոցիալականացման քաղաքագիտական մոտեցումները:
- Որոշակիացվել է խորհրդարանական մշակույթ կատեգորիայի գործառութային դաշտը՝ կարևորելով ներկայացուցչականության և «մուտք»-«ելք» հիման վրա ձևավորված հաղորդակցության ապահովումը «տեղեկատվության-գիտելիքի-արհեստական բանականության» հասարակության շրջանակներում:
- Ուսումնասիրվել են արդի քաղաքական գիտության մեջ ժողովրդավարական փոխակերպումների գործընթացում քաղաքական համակարգերի գնահատման արժեքաբանական և ինստիտուցիոնալ գործոնները:
- Ներկայացվել է խորհրդարանական մշակույթի ձևավորման էվոլյուցիան նախքան պետական իշխանության ինստիտուցիոնալացման ժամանակահատվածում, և այնուհետև, Հայաստանի առաջին, երկրորդ, երրորդ Հանրապետությունների պետականաշինության գործընթացում:
- Ուսումնասիրվել են ՀՀ կուսակցական համակարգի կայացման ինստիտուցիոնալ և գաղափարական հիմնախնդիրները, ինչպես նաև կուսակցությունների. դերակատարումը քաղաքական և քաղաքացիական կրթության ծրագրերի մշակման և իրականացման գործընթացում:
- Ուսումնասիրվել է օրենսդիր-գործադիր իշխանության ճյուղերի փոխզսպման և հակակշռման մեխանիզմների կիրարկման գործընթացը՝ որպես խորհրդարանական արդյունավետ վերահսկողության նախապայման: Այս առումով համեմատական ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել են պետական բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկման և ընդունման ընթացակարգերը ՀՀ-ում և ԳԴՀ-ում:
- Հստակեցվել է քաղաքացիական հասարակության դերը խորհրդարանական մշակույթի ժողովրդավարացման, մասնավորապես՝ երկրի օրենսդրականության մշակման գործընթացում հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների ջանքերը՝ հանրային պահանջները ու առաջարկները համախմբելու, ինչպես նաև դրանց շուրջ քաղաքական կուսակցությունների հետ համընդհանուր օրակարգի ձևավորման գործում:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Ուսումնասիրման օբյեկտը ՀՀ–ում խորհրդարանական մշակույթի կայացման գործընթացն է որպես ժողովրդավարական անցման բաղադրիչ: **Հետազոտության առարկան են** հայկական պառլամենտարիզմի արժեքաբանական, մշակութային և ինստիտուցիոնալ հիմքերը, հասարակական համակարգի արդիականացման, սոցիալականացման և վերասոցիալականացման գործընթացները, խորհրդարանական ընտրանու, ՔՀԿ-ների, խորհրդարանական և արտախորհրդարանական կուսակցությունների միջև ինտիտուցիոնալ և ոչ ինստիտուցիոնալ քաղաքական հարաբերությունները, ինչպես նաև խորհրդարանի գործառութային արդյունավետությունը:

Ատենախոսության տեսամեթոդական հիմքը: Հետազոտության իրականացման համար օգտագործվել են ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ քաղաքագիտական և միջառարկայական մեթոդաբանություն ու մեթոդիկա: Մասնավորապես, ընդհանուր գիտական մեթոդներից կիրառվել են ինդուկցիայի, դեդուկցիայի, համանմանության, ինչպես նաև քաղաքագիտության համեմատական մեթոդները: Որպես հատուկ գիտական մեթոդ օգտագործվել է փաստաթղթերի բովանդակային վերլուծության մեթոդը: Հետազոտության մեջ համեմատական ուսումնասիրության շրջանակներում վերլուծվել են՝ այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են 1995 թ. ՀՀ Սահմանադրությունը՝ 2005 թ. և 2015 թ. փոփոխություններով, «Կուսակցությունների մասին» 2002 թ. ՀՀ օրենքը և 2016 թ. ՀՀ սահմանադրական օրենքը, ԳԴՀ Հիմնական օրենքը և ԳԴՀ կուսակցությունների մասին օրենքը: Ուսումնասիրվել են նաև օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների և այլ ռազմավարական փաստաթղթերը:

Համեմատական մեթոդի կիրառմամբ ուսումնասիրվել են նախկին Խորհրդային Միության երկրների քաղաքական համակարգերի արժեքաբանական, սահմանադրաիրավական և ինստիտուցոնալ փոխակերպումները: Օրենսդիր-գործադիր իշխանության ճյուղերի փոխազդեցության համատեքստում վերլուծություն են ենթարկվել ԳԴՀ և ՀՀ խորհրդարանական վերահսկողության մոդելները:

Աշխատանքում կիրառվել են նաև վիճակագրական, համակարգման և դասակարգման մեթոդները: Վերջիններիս կիրառմամբ դասակարգվել են ԽՄ լայն և նեղ սահմանումները, եզրահանգումները, ինչպես նաև արժեքաբանական և ինստիտուցիոնալ նախադրյալները ԽՄ կայացման գործընթացում: Քաղաքագիտական խոսույթի ուսումնասիրության տեսանկյունից անցկացվել են նաև հարցազրույցներ, որոնցից երկուսը տպագրվել են «Եվրոպական միությունը, Կենտրոնական Ասիան և Հարավային Կովկասը միջազգային հարաբերությունների համակարգում» ((EUCACIS – “The EU, Central Asia and the Caucasus”) միջազգային դրամաշնորհային ծրագրի շրջանակներում հրապարակված առցանց հանդեսներում:

Ատենախոսության գիտական նորույթը: Հետազոտության առջև դրված խնդիրների իրագործման ընթացքում ձեռք են բերվել տեսական և գործնական նշանակության մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ հատկապես կարևորվում են հետևյալները.

- ՀՀ-ում ԽՄ-ի կայացման գործընթացի համատեքստում հստակեցվել է «խորհրդարանական մշակույթ» հասկացության գործառութային դաշտը, դերակատարները և կառուցվածքը, ինչպես նաև ներկայացվել է խորհրդարանական մշակույթի նոր սահմանում:
- Տարբերակվել են ԽՄ կայացման գործընթացի՝ անցյալ-ներկա-ապագա եռաչափությամբ պայմանավորված և՛ արժեքաբանական, և՛ ինստիտուցիոնալ նախադրյալները, որոնք հնարավորություն են տալիս բնորոշել մշակութային ստատուս քվոն՝ ժողովրդավարության որակի բարձրացման նկատառումներով ապագային միտված զարգացման ռազմավարություն մշակելու նպատակով:

➢ Հիմնավորվել է ԽՄ-ի՝ ժողովրդավարական անցման գործընթացում և՛ որպես բաղադրիչ, և՛ որպես նախադրյալ լինելու հանգամանքը: Այս առումով ուշադրության է արժանի ժողովրդավարության որակի գնահատման սուբյեկտիվ չափորոշիչների հայեցակարգը, որի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պնդել, որ անկախ կառավարման մոդելից՝ ԽՄ-ն արտացոլում է պատմական հիշողությամբ, միֆերով, կարծրատիպերով և ավանդույթներով պայմանավորված հասարակության վարքային մոդելները:

➢ Հիմնավորվել է ՀՀ-ում ԽՄ-ի կայացման գործընթացում քաղաքական երկկողմ սոցիալականացման և վերասոցիալականացման միջոցով քաղաքական և քաղաքացիական հասարակության զարգացման և հզորացման անհրաժեշտությունը:

➢ ՀՀ-ում ԽՄ կայացման գործընթացում քաղաքականության դերակատարների հաշվետվողականության, քաղաքական պատասխանատվության ամրագրման և խորհրդարանի գործառութային արդյունավետության նկատառումներով՝ կարևորվել է պակտի կնքումը որպես քաղաքական շահերի համադրման ինստիտուցիոնալ գործիք:

➢ Իրականացվել է 1995 թ. ՀՀ Սահմանադրության, դրա 2005 թ. և 2015 թ. փոփոխությունների, ինչպես նաև «Կուսակցությունների մասին» 2002 թ. ՀՀ օրենքի և «Կուսակցությունների մասին» 2016 թ. ՀՀ սահմանադրական օրենքի համեմատական վերլուծություն, որը հնարավորություն է ընձեռել վեր հանելու կուսակցական համակարգի կայացման օրենսդրական հիմնախնդիրները, և ներկայացնել առաջարկներ՝ նպաստելով ինստիտուցիոնալ մակարդակում կուսակցությունների ներքին ժողովրդավարության զարգացմանը, կուսակցական համակարգի մասնատվածության կրճատմանը և գաղափարական հենքի ամրապնդմանը:

➢ Օրենսդիր-գործադիր ճյուղերի միջև փոխազդեցության որակի բարձրացման նկատառումներով իրականացվել է ՀՀ և ԳԴՀ խորհրդարանական վերահսկողության մոդելների համեմատական ուսումնասիրություն, որի շրջանակներում դիտարկվել են պետական բյուջեի մասին օրենքի նախագծի ընդունման և քննարկման ընթացակարգերը:

➢ Ներկայացվել են քաղաքական մշակույթի զարգացման շարժընթացով և տեղեկատվական հեղափոխությամբ պայմանավորված խորհրդարանի՝ նոր հումանիզմի սկզբունքների կիրարկման շրջանակներում հանրային իշխանության քաղաքացիավարացման անհրաժեշտությունը:

➢ Ուսումնասիրելով ՀՀ անկախության 28 տարիների ընթացքում քաղաքացիական հասարակության ինստիտուտների բազմակողմ դերակատարումը և Թավշյա հեղափոխությամբ պայմանավորված ՔՀԿ-ների նվազ մասնակցությունը հետհեղափոխական գործընթացներին, առաջարկ է արվել ՀՀ ազգային ժողովին կից ձևավորել քաղաքացիական հասարակության ֆորում:

➢ ԽՄ կայացման գործընթացում ՔՀԿ դերակատարման բարձրացման նպատակով առաջարկվում է 2016թ. «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում և 2016թ. ՀՀ ընտրական օրենսգրքում կատարել փոփոխություն՝սահմանել կարգ, որ խորհրդարանում յուրաքանչյուր տարի

ռոտացիոն սկզբունքով, խորհրդակցական ձայնի իրավունքով ներկայացված լինեն քաղաքացիական նախաձեռնություններ և հասարակական կազմակերպություններ:

Ատենախոսության գիտատեսական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսությունը գիտական համակարգված ուսումնասիրություն է, որում վեր են հանվել հայեցակարգային և օրենսդրական-իրավական դաշտի արդիական հիմնախնդիրներ: Տեղ գտած վերլուծություններն ու առաջարկված հանգուցալուծումները կարող են օգտակար լինել հասարակական և քաղաքական ոլորտի մասնագետների համար՝ հասարակության առջև ծառացած հիմնախնդիրների օրակարգային առաջնահերթության, դրանց լուծմանն ուղղված ռազմավարական ծրագրերի ու հայեցակարգերի, երկկողմ (հասարակական կազմակերպություններ-պետություն) կամ եռակողմ (հասարակական կազմակերպություններ-պետություն-մասնավոր հատված) նոր փաստաթղթերի մշակման, ինչպես նաև այդ քաղաքականության ոլորտային ուղղությունների հստակեցման և իրականացման փուլերում: Հետևաբար, ստացված գիտական արդյունքները կարող են օգտագործվել Ազգային ժողովի, Կառավարության, քաղաքական կուսակցությունների, տեղեկատվական-վերլուծական և հետազոտական կենտրոնների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների կողմից:

Հետազոտության գործնական նշանակությունը պայմանավորված է քաղաքական զարգացման ճգնաժամային փուլում գտնվող պետության ինստիտուցիոնալ կառույցների կայացման ու զարգացման, հասարակության-իշխանության միջև առկա և խորացման միտում ունեցող անջրպետի չեզոքացման, օրենսդրական դաշտի հետագա կատարելագործման անհրաժեշտությամբ: Աշխատանքում ընդգրկված նյութերը, գիտական արդյունքները և գործնական առաջարկությունները կարող են օգտագործվել քաղաքական գիտության, սոցիոլոգիայի, պետության և իրավունքի, քաղաքացիական կրթության դասընթացներում, ինչպես նաև գիտական հետազոտություններում: Հետազոտության մեջ կատարված առաջարկություններն ու եզրակացությունները կարող են օգտագործվել համագործակցության ռազմավարական նոր փաստաթղթեր ու ծրագրեր մշակելիս, օրենսդրական բարեփոխումներ իրականացնելիս, որն էապես կնպաստի ՀՀ-ում ԽՄ ժողովրդավարացմանը և կայացմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Աշխատանքի փորձաքննությունն իրականացվել է Erasmus+ և Volkswagen Stiftung-ի «Եվրոպական միությունը, Կենտրոնական Ասիան և Հարավային Կովկասը միջազգային հարաբերությունների համակարգում» (EUCACIS – “The EU, Central Asia and the Caucasus”) միջազգային դրամաշնորհային ծրագրի շրջանակներում (2016-2019) տեղի ունեցած ասպիրանտական աշխատաժողովներին (PhD schools), 2016 թ.-ին Ղազախստանում, 2017 թ.-ին Բեռլինում, 2018 թ.-ին Վրաստանում և 2019 թ.-ին Բիշքեքում կայացած միջազգային գիտաժողովներին: Ատենախոսական աշխատանքի տարբեր կառուցամասերը պարբերաբար ներկայացվել են վերոնշյալ ասպիրանտական ծրագրի շրջանակներում Գերմանիայի համալսարանների

դասախոսներից, CIFE և IEP գիտահետազոտական կենտրոնների մասնագետներից կազմված խորհրդում:

Ի հավելումն՝ ատենախոսական աշխատանքի հիմնադրույթները քննարկվել են, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցության, «Լիբերալ քաղաքականության ինստիտուտ» ՀԿ-ի կողմից երիտասարդների համար Լիբերալ քաղաքականության դպրոցի շրջանակներում և մի շարք այլ պետական և ոչ պետական կառույցների աշխատանքի կազմակերպման ընթացքում:

Հետազոտության հիմնական դրույթներն ու արդյունքները քննարկվել են նաև սեմինար-քննարկումներում: Ատենախոսության հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են 10 գիտական հրապարակումներում, ինչպես նաև միջազգային առցանց հարթակում հրապարակված հարցազրույցներում:

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի «Քաղաքական կառավարում և հանրային քաղաքականություն» ամբիոնի նիստում և երաշխավորվել է պաշտպանության համար ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության մեջ օգտագործվել է 237 աղբյուր: Ատենախոսական աշխատանքի ծավալը 193 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ ներկայացված է խնդրի արդիականությունը, գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, աշխատանքի գիտատեսական և կիրառական նշանակությունը:

Առաջին գլխում վերնագրված՝ **«Խորհրդարանական մշակույթի ձևավորման իրավաքաղաքական ակունքները»**, ներկայացվել է խորհրդարանական մշակույթ հասկացության էությունը, սահմանումները և կառուցվածքը, փոխհարաբերությունները քաղաքական մշակույթ և սահմանադրական մշակույթ իրավաքաղաքական կատեգորիաների հետ, ինչպես նաև քաղաքական սոցիալականացման և վերասոցիալականացման բազմաչափությունը խորհրդարանական կառավարման ձևի ժողովրդավարացման պայմաններում: Այն բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Խոհրդարանական մշակույթը որպես քաղաքական և սահմանադրական մշակույթների փոխազդեցության արդյունք» վերնագրով, խորհրդարանական մշակույթի էությունը քննարկվել է քաղաքական սահմանադրագիտության տեսանկյունից՝ ուսումնասիրելով դրա փոխհարաբերությունները «քաղաքական մշակույթ» և «սահմանադրական մշակույթ» իրավաքաղաքական կատեգորիաների հետ: Նշյալ մոտեցման հիմքում կարևորվել է սահմանադրականության և ժողովրդավարացման միջև փոխներգործությունը, որն արտացոլում է ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացներում գտնվող հասարակությունների քաղաքացիական ներուժը, վարքային մոդելները և դրանց ազդեցությունը քաղաքական ինստիտուտների գործունեության վրա:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են հետևյալ հիմնադրույթները.առաջին հերթին, խորհրդարանական մշակույթի զարգացումը կախված է անցյալի, ներկայի և ապագայի շարժընթացով պայմանավորված սահմանադրական և քաղաքական մշակույթների փոխազդեցության որակով: Երկրորդ, իրավական տեսանկյունից, Սահմանադրությունը՝ որպես բարձրագույն իրավական ակտ, կարգավորում է ժողովրդավարական՝ սկզբունքների իրականացման մեխանիզմները, իսկ քաղաքական տեսանկյունից՝ սահմանում է խաղի իրավական կանոններ՝ քաղաքական գործընթացների սահմանադրականությունը երաշխավորելու նպատակով: Երրորդ, սահմանադրական, քաղաքական և խորհրդարանական մշակույթների փոխազդեցությունը սահմանում է անձի քաղաքական սոցիալականացումը որպես ժողովրդավարական համախմբման գերակայություն:

Երկրորդ՝ «Խորհրդարանական մշակույթ» հասկացության սահմանումները» ենթագլխում քննարկվել են խորհրդարանական մշակույթ հասկացության սահմանումները, կառուցվածքը և գործառութային դաշտը, որոնք բազմակողմանի ուսումնասիրվել են ժողովրդարացման «երրորդ ալիքի» և հետխորհրդային նոր անկախացած երկրներում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական

փոխակերպումների համադրման համատեքստում: Հասկացության կառուցվածքում տարբերակվել են խորհրդարանական և պատգամավորական էթիկան, քաղաքական և կառավարչական ընթացակարգերը, որոնք արտացոլում են քաղաքական և քաղաքացիական հարաբերությունների որակը, ուսումնասիրվել է խորհրդարանական և քաղաքական մշակույթների գործառական փոխազդեցությունը, ինչպես նաև գործառութային դաշտերի համադրման եզրերը և զուգամիտման հնարավորությունները: Ներկայացվել են հայ քաղաքական և քաղաքագիտական դիսկուրսի ուսումնասիրության արդյունքները, որոնք նպատակ են ունեցել ներկայացնել նոր համակողմանի սահմանում՝ ամբողջացնելով խորհրդարանական մշակույթի մասին ընկալումները և մեկնաբանությունները: Առաջարկվող սահմանման հիմքում անցյալի փորձի ինտեգրման և արդյունավետ քաղաքական երկխոսության դրույթների ամրագրման միջոցով փորձ է արվել վերաարժևորել ժամանակի մարտահրավերներին համարժեք ներկայացուցչության և հաղորդակցության գործառույթների արդիականացման, ինչպես նաև քաղաքական և քաղաքացիական ներառականության վրա խարսխված համագործակցության մշակույթի կայացման անհրաժեշտությունը:

Երրորդ ենթագլխում՝ վերնագրված ««Փափուկ ուժ»-ի սոցիալականացումը և վերասոցիալականացումը որպես ՀՀ խորհրդարանական մշակույթի ժողովրդավարացման հրամայական», **դիտարկվել** է սոցիալականացման և վերասոցիալականացման «փափուկ ուժը» խորհրդարանական կառավարման ձևի ժողովրդավարացման պայմաններում: Նշյալ մոտեցումը հնարավորություն է տվել հիմնավորել խորհրդարանական ընտրանու կողմից քաղաքական խոսույթի միջոցով քաղաքական մշակույթը արդիականացնելու և սոցիալ-քաղաքական համակարգը ազատականացնելու անհրաժեշտությունը քաղաքականության դերակատարների միջև համագործակցության որակի բարձրացման տեսանկյունից: «Տեղեկատվական-գիտելիքի-արհեստական բանականության հասարակությունում» փափուկ ուժն այլևս չի կարելի դիտարկել զուտ որպես հանրային դիվանագիտության բաղկացուցիչ, քանի որ այն փոխակերպվել է՝ ելնելով հաղորդակցության նոր տեխնոլոգիաների կիրառման հրամայականներից: Այն այլևս պետք է դիտարկել պետության առաջնորդների և կառավարող ընտրանու գործիքակազմի անբաժան մաս՝ որպես «խելացի ուժ», որն ապահովում է ներքաղաքական կայունությունը ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացներում՝ հետամուտ լինելով արդի միջազգային հարաբերությունների համակարգում պետության ինքնության արդիականացմանը: Այս առումով որպես խորհրդարանական ներկայացուցչականություն հրամայական է սահմանվել խորհրդարանական էլիտայի և հասարակության երկկողմ սոցիալականացման և վերասոցիալականացման գործընթացները: Վերջիններս դիտարկվել են որպես կարևոր նախապայմաններ հասարակության գծային ազատականացման, «մշակութային բռնության» և «homo-sovieticus»-ի վերարտադրման մարտահրավերների հաղթահարման համատեքստում:

Երկրորդ՝ «Խորհրդարանական մշակույթի կայացման արժեքաբանական նախադրյալները Հայաստանի Հանրապետությունում» գլխում ներկայացվել են

հետխորհրդային երկրներին, այդ թվում՝ ՀՀ-ին բնորոշ ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացի հիմնախնդիրները նեոքաղաքական գործընթացների համատեքստում: Հիմնավորվել է խորհրդարանական մշակույթի՝ որպես ժողովրդավարության որակի ցուցիչ լինելու հանգամանքը, ինչպես նաև ներկայացվել են խորհրդարանական մշակույթի ձևավորման պատմաքաղաքական առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «ՀՀ խորհրդարանական մշակույթի ժողովրդավարացման հիմնախնդիրները և նախադրյալները նեոքաղաքականության համատեքստում» վերնագրով, քննարկվել են խորհրդարանական մշակույթի կայացման և ժողովրդավարական համախմբման գործընթացների փոխպայմանավորված բնույթը՝ այն դիտարկելով քաղաքական համակարգի կառուցվածքային ու դերային գործոնների սիմբիոտիկ փոխազդեցության շրջանակներում: Այս մոտեցումը հնարավորություն է տվել գնահատելու մշակութային ստատուս-քվոն՝ արդիական դարձնելով խորհրդարանի գործառութային արդյունավետությունը: Ներկայացվել են ՀՀ ժողովրդավարական անցում-համախմբում գործընթացի հիմնախնդիրները, որոնք շարունակում են պահպանել արդիականությունը նեոքաղաքականության համատեքստում՝ պայմանավորելով քաղաքական ընտրանու և հասարակության կողմից համարժեք վարքային մոդելների ձևավորումն ու վերարտադրությունը: Ներկայացված հիմնախնդիրների ուսումնասիրության արդյունքները թույլ են տվել շեշտադրել հատկապես՝ արժեքաբանական գործոնների գերակայությունը անցումային գործընթացներում՝ հրամայական դարձնելով քաղաքացիական ներուժի գնահատման անհրաժեշտությունը: Վերջինս խիստ արդիական է դարձնում խորհրդարանի գործառութային արդյունավետության ապահովումը՝ փոխակերպելով խորհրդարանի մասին մեր ավանդական պատկերացումները, և դիտարկելով խորհրդարանական մշակույթը՝ որպես ժողովրդավարության որակի ցուցիչ:

Երկրորդ գլխի երկրորդ՝ «Խորհրդարանական մշակույթի սուբյեկտիվ չափորոշիչները ժողովրդավարության որակի գնահատման չափումներում» ենթագլխում հիմնավորվել է խորհրդարանական մշակույթի՝ ժողովրդավարական վարչակարգերի, թերևս, ամենակարևոր չափման գործիքներից մեկը լինելու հանգամանքը: ԽՄ-ն մատնացույց է անում ոչ միայն ներկայացուցչական ինստիտուտների գործունեության մշակութային մոդելների կերպափոխման էվոլյուցիան, այլև՝ *ժողովրդավարության որակի բարձրացման նկատառումներով չափելի է դարձնում* 1) հասարակական ներուժը, 2) քաղաքացիների և քաղաքական ընտրանու ինտեգրման աստիճանը քաղաքական գործընթացներին, 3) քաղաքական ընտրանու և զանգվածների միջև երկխոսության որակը, ինչպես նաև՝ 4) քաղաքականության դերակատարների կամքը ժողովրդավարական վարչակարգը՝ որպես «միակ խաղը քաղաքում» (“the only game in town”) պահելու տեսանկյունից: Ներկայացված ուսումնասիրությունը հիմք է տվել ընդգծել հիմնադրույթն առ այն, որ խորհրդարանական մշակույթի կայացման տեսանկյունից բնավ կարևոր չէ, թե Սահմանադրությամբ կառավարման ինչ մոդել է ամրագրվել՝ նախագահական,

կիսանախագահական թե՞ խորհրդարանական։ Հիմք ընդունելով արդի քաղաքագիտության մեջ խորհրդարանի գործառութային արդյունավետության չափմանն առնչվող տարաբնույթ մոտեցումները, առաջարկվել է մշակել խորհրդարանական մշակույթի ժողովրդավարացման ինդեքս (ԽՄԺԻ)՝ հետխորհրդային երկրների անցումից համախմբում գործընթացների հիմնախնդիրների հաղթահարման գործընթացը որակապես նոր փուլ տեղափոխելու նպատակով։ Այն հնարավորություն կտա գնահատել հասարակության վարքային մոդելների փոխակերպումների որակը էվոլյուցիոն ժամանակաընթացքում՝ չափման միավոր դիտարկելով ոչ միայն ընտրական գործընթացները, այլև՝ քաղաքացիների ընկալումները խորհրդարանի՝ որպես հանրային իշխանության ինստիտուտի, խորհրդարանական ինստիտուտների, պատգամավորների, կառավարության, պետական կառավարման մարմինների գործունեության շուրջ։

Երկրորդ գլխի երրորդ՝ «Խորհրդարանական մշակույթի ձևավորման պատմաքաղաքական առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» ենթագլխում ներկայացվել է ՀՀ խորհրդարանական մշակույթի էվոլյուցիոն զարգացումը նախքան պետական ինքնիշխանության ինստիտուցիոնալացման և սահմանադրաիրավական կարգավորման ժամանակահատվածում, և այնուհետև՝ առաջին ու երկրորդ հանրապետությունների սահմանադրական և քաղաքական մշակույթների փորձառության ուսումնասիրության համատեքստում։ Վերոնշյալ պատմական փուլերի ուսումնասիրությունը է Ա. Թուրենի սոցիալական գործառնության հայեցակարգի համատեքստում փաստում է արժեքաբանական, գաղափարական, սահմանադրաիրավական, և ինստիտուցիոնալ հարթություններում տարաբնույթ մարտահրավերների գոյության մասին։ Դրանք, մի կողմից՝ պետականության և պետական կառավարման փորձառության բացակայության, մյուս կողմից՝ գոյաբանական և անվտանգային հիմնախնդիրների արդյունք էին, որոնք իրենց ուրույն դրսևորումն ունեն նաև ժամանակակից Հայաստանի անկախ և ժողովրդավարական կառավարման համակարգի պայմաններում...։

Երրորդ՝ «Խորհրդարանական մշակույթի կայացման ինստիտուցիոնալ նախադրյալները Հայաստանի Հանրապետությունում» գլխում ներկայացվել են հետխորհրդային նորանկախ երկրներում ինստիտուցիոնալ և սահմանդրաիրավական փոխակերպումների էվոլյուցիան, ինչպես նաև ՀՀ-ում խորհրդարանական մշակույթի կայացման գործընթացի տիրույթներում խորհրդարանի դերի կերպափոխումը պետական իշխանության ինստիտուցիոնացման չորս ալիքների հոլովույթում։ Այն հնարավորություն է ընձեռել գնահատելու ՀՀ Սահմանադրության համապատասխանությունը այն իրավաքաղաքական տարածությանը, որն էլ իր հերթին պետք է ապահովի սահմանադրականությունը երկրում։ Սույն գլխում քննարկվել են Հայաստանի պատմության նորագույն շրջանում տեղի ունեցած նախագահական և խորհրդարանական ընտրությունների արդյունքում ձևավորված քաղաքական կոալիցիաների ձևավորման և գործառնության փորձառությունը, կուսակցական

համակարգի կայունությունը, խորհրդարանական վերահսկողության իրականացման խնդիրներն ու առանձնահատկությունները, ինչպես նաև խորհրդարանական ընտրանու և քաղաքացիական հասարակության սոցիալականացումը խորհրդարանական կառավարման ձևի ժողովրդավարացման պայմաններում:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «Հետխորհրդային իներցիան և խորհրդարանի դերի կերպափոխումը ՀՀ պետական իշխանության ինստիտուցիոնալացման չորս ալիքների հոլովույթում» դիտարկվել են 1990-ական թվականներին նախկին Խորհրդային Միության անկախացած երկրներում, ինչպես նաև ՀՀ-ում սահմանադրաիրավական և ինստիտուցիոնալ ռեֆորմների արդյունքում ձևավորված կառավարման ձևերը և դրանց գործառնության առանձնահատկությունները ինստիտուցիոնալ կերպափոխման մոդելների շրջանակներում: Խորհրդարանական մշակույթի ժողովրդավարացման միտումների ուսումնասիրությունը պետական իշխանության ինստիտուցիոնալացման չորս ալիքների շրջանակներում թույլ է տալիս շեշտադրել հիմնադրույթն առ այն, որ քաղաքական մշակույթի զարգացման ցածր մակարդակը, ինչպես նաև մեխանիկական բնույթ ունեցող ինստիտուցիոնալ և սահմանադրաիրավական փոխակերպումները մեծապես խոչընդոտել են մի կողմից ժողովրդավարական քաղաքական մշակույթի զարգացումը, մյուս կողմից՝ քաղաքականության դերակատարների կողմից խորհրդարանի՝ որպես հանրային իշխանության գերակա ինստիտուտի դերի գիտակցմանը: Ավելին, վերջին տասնամյակների ընթացքում տեղի ունեցող քաղաքական գործընթացները էապես խաթարել են քաղաքական համակարգի կայունության հիմքերը՝ սոցիալ-տնտեսական և քաղաքական հիմնախնդիրների հաղթահարման հնարավորությունը արդիական դարձնելով իրավիճակային հեղափոխական փուլերի ձևավորման շրջանակներում:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «Քաղաքական կոալիցիաների ձևավորումը որպես ինստիտուցիոնալ գործիք խորհրդարանական մշակույթի ժողովրդավարացման համատեքստում» ներկայացվել են Հայաստանի պատմության նորագույն շրջանում տեղի ունեցած նախագահական և խորհրդարանական ընտրությունների արդյունքում ձևավորված քաղաքական կոալիցիաների ձևավորման և գործառնության փորձառությունը, ինչպես նաև իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի փոխազդեցության արդյունավետության ապահովման տեսանկյունից համագործակցության հուշագրեր և քաղաքական համաձայնություններ ձևավորելու Լիտվայի և Շվեդիայի փորձառությունները: Հայաստանի նորագույն պատմության մեջ քաղաքական կոալիցիաների ձևավորման և գործառնման ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ սկսած 2003 թվականից մինչ օրս, թե՛ օրենսդիր և թե՛ գործադիր իշխանությունում քաղաքական համաձայնությունը կամ պակտը՝ որպես քաղաքական շահերի համախմբման ինստիտուցիոնալ գործիք, գրեթե միշտ անտեսվել է՝ քաղաքական և հանրային վերահսկողությունը փոխադրելով «կուլիսային» և ոչ ֆորմալ հարաբերությունների դաշտ: Հաշվի առնելով մի կողմից՝ աշխարհաքաղաքական և անվտանգային իրողությունները, մյուս կողմից՝

խորհրդարանական ու արտախորհրդարանական ուժերի կողմից անվտանգային և արտաքին քաղաքական կարևոր հիմնախնդիրների շուրջ թե՛ ներքին և թե՛ միջազգային հանրությանն ուղղված շահարկումներ անելու արատավոր երևույթը՝ աշխատանքում ներկայացվել է ռազմավարական ուղենիշեր սահմանելու մասին համագործակցության հուշագիր կնքելու մասին օրենսդրական նախագիծ: Վերջինս քաղաքական պատասխանատվության ամրագրման, բազմակողմ պարտավորությունների սահմանման, ինչպես նաև քաղաքական ճգնաժամերի հաղթահարման տեսանկյունից կարող է ունենալ առանցքային նշանակություն:

Երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ «Կուսակցական համակարգի կայունությունը որպես խորհրդարանական մշակույթի ժողովրդավարացման նախապայման» դիտարկվել են կուսակցական համակարգի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Կուսակցությունների հաշվետվողականության և դրանց գործունեության նկատմամբ հանրային վերահսկողությունը բարձրացնելու նկատառումներով՝ քննարկվել են կուսակցությունների գործունեության, դրանց դերի և նշանակության մասին մեկնաբանությունները, ինչպես նաև համեմատական ուսումնասիրության շրջանակներում անդրադարձ է կատարվել եվրոպական երկրների կուսացությունների գործունեության սահմանադրաիրավական և օրենսդրական կարգավորումներին: Հայաստանում կուսակցական համակարգի զարգացման հիմնախնդիրները վեր հանելու համար դիտարկվել են կուսակցությունների գործունեության սահմանադրաիրավական կարգավորումները 1995 թ. ՀՀ Սահմանադրության և դրա 2005թ. և 2015թ.-ների փոփոխությունների, ինչպես նաև՝ «Կուսակցությունների մասին» 2002 թ. ՀՀ օրենքի և «Կուսակցությունների մասին» 2016 թ. ՀՀ սահմանադրական օրենքի շրջանակներում: Այս առումով առանձնացվել են հետևյալ հիմնախնդիրները՝ 1) կուսակցությունների բազմաքանակությունը, որը դեռևս չի վկայում բազմակուսակցական համակարգի զարգացման և գաղափարական բազմակարծության մասին, 2) կուսակցությունների գաղափարական և ներկայացուցչական գործունեության չափելիության որոշակիացումը, 3) կուսակցությունների գործունեությունը կասեցնելու պայմանների գնահատումը թե՛ ժամկետի և թե՛ ժամկետի շրջանակում դրված բովանդակության տեսանկյունից:

Երրորդ գլխի չորրորդ ենթագլխում՝ «Խորհրդարանական վերահսկողությունը որպես իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի միջև փոխազդեցության արդյունավետության հրամայական» ներկայացվել են իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի միջև արդյունավետ փոխազդեցության ապահովման հիմնախնդիրները: Խորհրդարանի գործառութային արդյունավետության բարձրացման, ինչպես նաև խորհրդարանական մշակույթի ժողովրդավարացման տեսանկյունից խորհրդարանական վերահսկողությունն ունի առանցքային նշանակություն: Սույն ենթագլխում միջազգային փորձի ուսումնասիրության տեսանկյունից քննարկվել են արևմտյան ժողովրդավարություններում գործող օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի փոխազդեցության տարբեր չափումներ, որոնք արտացոլում են խորհրդարանական

և հանրային վերահսկողության արդի մեխանիզմներն և ընթացակարգերը: Համեմատական վերլուծության շրջանակներում դիտարկվել են պետական բյուջեի մասին օրենքի ընդունման ընթացակարգերը Գերմանիայում և Հայաստանում: Ուսումնասիրության արդյունքները հնարավորություն են տվել արձանագրել հիմնադրույթն առ այն, որ օրենսդիր և գործադիր ճյուղերի փոխզսպման և հակակշռման տեսանկյունից փաստացի գործ ունենք խորհրդարանի նկատմամբ գործադիր իշխանության գերիշխող դիրքի հետ, ինչը ոչ միայն անընդունելի է իշխանության ճյուղերի տարանջատման և խորհրդարանական ինքնիշխանության տեսանկյունից, այլև՝ հակասում է խորհրդարանական կառավարման սկզբունքներին:

Երրորդ գլխի հինգերորդ ենթագլխում՝ «Խորհրդարանական ընտրանու և քաղաքացիական հասարակության սոցիալականացումը խորհրդարանական կառավարման պայմաններում» քննարկվել են ՀՀ խորհրդարանական ընտրանու օրենսդրական սոցիալականացման գործառութային, վերաբերմունքային և վարքաբանական մոդելները, որոնք ձևավորում են անհրաժեշտ նախադրյալներ խորհրդարանի և քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջև հետադարձ կապի վրա հիմնված արդյունավետ փոխգործակցության, ինչպես նաև սոցիալական մեդիա հարթակներում PR-GR տեխնոլոգիաների մանիպուլյացիան կրճատելու համար: Վերջին տասնամյակի ընթացքում հայաստանյան սոցիալ-քաղաքական վերջին զարգացումները վկայում են, որ քաղաքական գործիչները և տարաբնույթ շահային խմբերը PR-GR տեխնոլոգիաները կիրառում են ոչ թե հանության հետ երկխոսելու, այլ սեփական տրոհված ինքնությունն արդյունավետ «վաճառելու» համար: Այս համատեքստում սույն գլխի շրջանակներում քննարկվել են հետևյալ հիմնախնդիրները՝ 1) սոցիալական անկայունությունը և սոցիալականացման փուլերի միջև անհամաձայնությունը, և 2) արժեքային անորոշությունը կամ բևեռվածությունը: Ներկայացվել են գործնական առաջարկներ, որոնք կարող են ունենալ արդյունավետություն վերոնշյալ խնդիրների հաղթահարման ուղղությամբ:

Եզրակացության մեջ ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները, որոնցից հարկ է առանձնացնել հետևյալը.

- Խորհրդարանական մշակույթի կայացման գործընթացը չպետք է պայմանավորված լինի պետական կառավարման համակարգի այս կամ այն մոդելով: Թե՛ նախագահական, թե՛ կիսանախագահական և թե՛ խորհրդարանական կառավարման մոդելի պայմաններում խորհրդարանական մշակույթը պետք է զարգանա՝ փոխակերպելով հանրային իշխանության արժեքաբանությունը նոր հումանիզմի սկզբունքների շրջանակներում: ԽՄ գործընթացի ուսումնասիրությունը նեոքաղաքականության տիրույթներում հնարավորություն է տալիս բնորոշել մշակութային ստատուս քվոն՝ ժողովրդավարության որակի և խորհրդարանի գործառութային արդյունավետության բարձրացման նկատառումներով ապագային միտված զարգացման ռազմավարություն մշակելու նպատակով:

➢ Հետխորհրդային տարածության սահմանադրահիրավական և քաղաքական մշակույթի փորձառության ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ ՀՀ ԽՄ կայացման գործընթացում կարևորագույն հիմնախնդիր է համարվում «էնդոգեն» գործոնների բնականոն արդիականացումը: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ժողովրդավարական անցման գործընթացն իր գծային տրամաբանությամբ հանգեցրել է ինստիտուցիոնալ իզոմորֆիզմի, որի արդյունքում քաղաքական զարգացման ճգնաժամերը չեն հաղթահարվել՝ արդիական դարձնելով իրավիճակային հեղափոխական փուլի մշտական սպառնալիքը: Խորհրդարանական մշակույթի կայացման գործընթացի ուսումնասիրությունը պետք է ունենա «holistic» բնույթ՝ նպատակ ունենալով մի կողմից՝ տարբերակել «էնդոգեն» և «էկզոգեն», ինչպես նաև «էկզոգեն կվազի չափորոշիչներ»-ը, իսկ մյուս կողմից՝ զուգակցել ԽՄ արժեքաբանական և ինստիտուցիոնալ գործոնները՝ դրանց փոխազդեցության որակի մասին պատկերացում կազմելու համար:

➢ Խորհրդարանի գործառութային արդյունավետության բարձրացման նկատառումներով որպես հիմնական չափման միավոր է դիտարկվում քաղաքացիական ներուժը՝ հրամայական դարձնելով ԽՄ կայացման գործընթացում նոր հումանիզմի սկզբունքների կիրարկման անհրաժեշտությունը: Վերջին տասնամյակների ընթացքում էապես փոխակերպվել են խորհրդարանի մասին պատկերացումները: Այն այլևս չի դիտարկվում որպես միմիայն օրենսդրական գործառույթ իրականացնող մարմին. խորհրդարանը հանրային իշխանության հումանիզացման, ինչպես նաև հանրային քաղաքականության ներառականության և հասցեականության երաշխավորն է: Խորհրդարանի գործառութային արդյունավետության ուսումնասիրությունների շրջանակներում իրականացվող նոր հետազոտությունների հիմքում ընկած հասարակական զարգացման նոր հումանիզմի սկզբունքները փոխակերպում են հանրային իշխանության արժեքաբանությունը: Այս հետազոտությունների համեմատական ոսումնասիրությունը ցույց է տալիս, որ խորհրդարանի գործառութային արդյունավետության տեսանկյունից միայն ինստիտուցիոնալ չափորոշիչների հաշվարկման մեթոդաբանությունը թերի է և կարիք ունի համալրման:

➢ ԽՄ կայացման և ժողովրդավարական համախմբան գործընթացներն ունեն փոխպայմանավորված բնույթ և պայմանավորում են ժողովրդավարական վարչակարգի որակը: Ելնելով ժողովրդավարության որակի սուբյեկտիվ չափորոշիչների ուումնասիրության տեսանկյունից՝ կարող են պնդել, որ ԽՄ-ն ժողովրդավարական անցման գործընթացում և բաղադրիչ է, և նախադրյալ: Ժողովրդավարության որակի գնահատման սուբյեկտիվ չափորոշիչները համադրելով խորհրդարանի գործառութային արդյունավետության չափման շրջանակներում կիրառվող «իշխանության ինդեքս»-ի և «ժողովրդի ուժի ինդեքսի» չափումների հետ, առաջարկում ենք մշակել խորհրդարանական մշակույթի ժողովրդավարացման ինդեքսի (ԽՄԺԻ)՝ հետխորհրդային երկրների անցումից համախմբում գործընթացների հիմնախնդիրների հաղթահարումը որակապես նոր փուլ տեղափոխելու նպատակով:

- Խորհրդարանական մշակույթի զարգացման հիմնախնդիրների հետազոտման առումով նպատակահարմար է մասնագիտական գրականության մեջ առկա սահմանումները ու մեկնաբանությունները դասակարգել լայն և նեղ ըմբռնումներով:

Նեղ իմաստով, խորհրդարանական մշակույթն արտացոլում է պատգամավորական էթիկան, այսինքն՝ քաղաքական գործիչների վարքային մոդելները, հաղորդակցության մշակույթը հասարակության և քաղաքական ուժերի ներկայացուցիչների հետ փոխհարաբերություններում: *Լայն իմաստով,* խորհրդարանական մշակույթն ածանցվում է սահմանադրական և քաղաքական մշակույթների փոխազդեցությունից՝ անցյալի ինտեգրման միջոցով ձևավորելով այն տարածությունը, որտեղ պետք է համագործակցեն քաղաքական համակարգի բոլոր սուբյեկտները Սահմանադրությամբ երաշխավորված քաղաքական իրավունքների և ազատությունների իրացման շրջանակներում:

- Հիմք ընդունելով տեղեկատվական հեղափոխության մարտահրավերները քաղաքական խոսույթի արդիանակացման և քաղաքական երկխոսության որակի բարձրացման նկատառումներով առանցքային նշանակություն ունի «փափուկ ուժի» սոցիալականացման և վերասոցիալականացման գործընթացների երկկողմանիության ապահովումը: Մեր համոզմամբ՝ հասարակության երկկողմ սոցիալականացման և վերասոցիալականացման գործընթացները ձևավորում են անհրաժեշտ նախադրյալներ հանրային իշխանության հումանիզացման համար: Այն ենթադրում է ժողովրդավարության որակի բարձրացման նկատառումներով քաղաքական ընտրանու կողմից գործադրվող «փափուկ ուժի» գործիքակազմի ընդլայնում քաղաքական և հանրային խոսույթի ապաբևեռացման, կուտակված «նեկրոֆիլ» էներգիայի պարպման, հասարակության պահանջների մասնակի բավարարման և համագործակցության շարունակականության:

- Դիտարկելով ՀՀ-ում ԽՄ կայացման գործընթացում քաղաքականության դերակատարների հաշվետվողականության, քաղաքական պատասխանատվության ամրագրման և խորհրդարանի գործառութային արդյունավետության նկատառումներով պակտի կնքումը որպես քաղաքական շահերի համադրման ինստիտուցիոնալ գործիք, կարող ենք փաստել «նվազագույն շահումով» (minimum-wining) կոալիցիաների ձևավորման փորձառության մասին: Ելնելով Հայաստանի նորագույն պատմության մեջ քաղաքական կոալիցիաների ձևավորման և գործառնման ոսումնասիրություններից՝ արձանագրենք, որ սկսած 2003 թվականից մինչ օրս, թե՛ օրենսդիր և թե՛ գործադիր իշխանությունում քաղաքական համաձայնությունը կամ պակտը՝ որպես քաղաքական շահերի համախմբման ինստիտուցիոնալ գործիք, գրեթե միշտ անտեսվել է՝ քաղաքական և հանրային վերահսկողությունը փոխադրելով «կուլիսային» և ոչ ֆորմալ հարաբերությունների դաշտ, և պակտի՝ որպես քաղաքական շահերի համադրման ինստիտուցիոնալ գործիքի անտեսումը հանգեցրել է իրավիճակային հեղափոխական փուլի մշտական սպառնալիքի ձևավորմանը: Աշխատանքում բազմակողմանի դիտարկվել են քաղաքական կոալիցիաների ձևավորման Լիտվայի և Շվեդիայի փորձառությունները, որոնց հիման վրա Հավելված 1-ում ներկայացվել է

ռազմավարական ուղենիշեր սահմանելու մասին համագործակցության հուշագիր կազմելու շուրջ օրենսդրական նախաձեռնություն:

- ՀՀ-ում ԽՄ գործընթացի արժեքաբանական գործոնների ուսումնասիրությունը վկայում է կուսակցությունների միջև համաձայնության և համագործակցության, փոխզիջման և հանդուրժողականության հաստատման ճանապարհին *քաղաքական կամքի, վստահության ճգնաժամի մասին:* Վերջիններս քաղաքական շահերի համադրման գործընթացում խոչընդոտում են ծրագրային և գաղափարական խոսույթի զարգացումը՝ վստահության ճգնաժամը տեղափոխելով հանրության լայն շրջանակներ: Այս առումով ուշագրավ է մեջբերել Ռ. Դալի դիտարկումն առ այն, որ «հանրային մրցակցությունը պահանջում է վստահություն հակառակորդների նկատմամբ. նրանք հակառակորդներ են և ոչ թե երդվյալ թշնամիներ»: ԽՄ գործընթացի ինստիտուցիոնալ և սահմանադրահիրավական հենքի ուսումնասիրությունը վկայում է կուսակցությունների բազմաքանակության, ինչպես նաև գաղափարական և ծրագրային իրական մրցակցության ձևավորման տեսանկյունից անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին:
- Խորհրդարանական վերահսկողությունը խորհրդարանական մշակույթի ժողովրդարացման տեսանկյունից ունի առանցքային նշանակություն: Կառավարության գործունեության որակը, ինչպես նաև հանրային քաղաքականության հասցեականությունը առավելապես պայմանավորված են օրենսդիր-գործադիր իշխանության ճյուղերի փոխզսպման մոդելների փաստացի գործարկմամբ: ՀՀ-ում խորհրդարանի գործառութային արդյունավետության ուսումնասիրությունը օրենսիր-գործադիր ճյուղերի փոխզսպման և հակակշռման տեսանկյունից ցույց է տալիս, որ փաստացի գործ ունենք խորհրդարանի նկատմամբ գործադիր իշխանության գերիշխող դիրքի հետ, ինչը ոչ միայն անընդունելի է իշխանության ճյուղերի տարանջատման և ինքնուրույնության տեսանկյունից, այլև՝ հակասում է խորհրդարանական կառավարման սկզբունքներին: Այս առումով որպես կարևոր հարցադրումներ ներկայացրել ենք ոլորտային քաղաքականությունների մշակման և դրա փաստացի իրացման արդյունավետության «ex-ante» և «ex-post» չափման անհրաժեշտությունը խորհրդարանական ինստիտուտների և համապատասխան օրենսդրական մեխանիզմների հզորացմանը զուգահեռ:
  - ԽՄ կայացման գործընթացում խորհրդարանական ընտրանու և քաղաքացիական հասարակության ինստիտուտների փոխազդեցության ուսումնասիրությունը վկայում է սոցիալ-քաղաքական համակարգում սոցիալական անկայունության և սոցիալականացման փուլերի միջև անհամաձայնության և արժեքային անորոշության կամ բևեռվածության մասին: Այս հիմնախնդիրները հաղթահարելու տեսանկյունից դիտարկել ենք մի կողմից, խորհրդարանին կից գործող հասարակական դաշտի ձևավորումը, որտեղ ներկայացված կլինեն խորհրդարանական վերահսկողություն իրականացնող հասարակական կազմակերպությունները, և մյուս կողմից «Հասարակական կազմակերպությունների մասին» 2016 թ. ՀՀ օրենքում փոփոխություններ և/կամ լրացումներ անելու մասին

օրենսդրական նախագծի մշակումը խորհրդարանում ըստ կառավարության սահմանած գերակայությունների ՀԿ-ներին ներկայացուցչական մանդատով օժտելու հնարավորությամբ:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ գիտական հոդվածներում.

1. Արսենյան Մ., ՀՀ խորհրդարանական մշակույթի ժողովրդավարացման հիմնախնդիրները նեոքաղաքականության համատեքստում, «Գիտական Արցախ», №3(6), 2020, էջ 82-96:
2. Arsenyan M., New Challenges of Armenian Parliamentarism and Multiparty Democracy: Interview with A. Aleksanyan, EUCACIS in Brief No. 10, Berlin, September 2019.
3. Arsenyan M., The Development of Parliamentary Culture from an Axiological Perspective: Interview with M. Margaryan, EUCACIS in Brief No. 7, Berlin, May 2019.
4. Արսենյան Մ., Սոցիալականացման և վերասոցիալականացման «փափուկ ուժը» ՀՀ խորհրդարանական կառավարման ձևի ժողովրդավարացման պայմաններում, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2019, № 2 (29), էջ 67-76:
5. Arsenyan M., Challenges of Anti-Parliamentary Political Culture in Armenia, “Alternative” Scientific Journal, July-September, 2018, pp. 348-360.
6. Arsenyan M., Armenian Velvet Revolution and Its Negative Impact on the Stability of Political System, “Alternative” Scientific journal, July-September, 2018, pp. 337-348.
7. Արսենյան Մ., Մեծահասակների քաղաքացիական կրթության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում, Ինովացիոն հնարավորությունները և մարտահրավերները ժամանակակից աշխարհում. Գիտական հոդվածների ժողովածու. Եր., Նաիրի, 2018, էջ 99-109:
8. Արսենյան Մ., ՀՀ և ԱՀ խորհրդարանական դիվանագիտության փորձը. ձեռքբերումներ և զարգացման հեռանկարներ, Կանթեղ. Գիտական հոդվածների ժողովածու, 2017, № 3, էջ 144-154:
9. Արսենյան Մ., Խորհրդարանական մշակույթի կայացման քաղաքական նախադրյալների հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2016, № 1 (19), էջ 63-70:
10. Արսենյան Մ., Գլոբալացման գործընթացներում պետության ինստիտուտի կերպափոխման հրամայականները, միջբուհական գիտաժողովի նյութերի ժողովածու, մաս 2, հատուկ թողարկում: Հանրային կառավարում գիտական հանդես, 2014, էջ 71-79:

АРСЕНЯН МАГДА АРМЕНОВНА

СТАНОВЛЕНИЕ ПРЕДПОСЫЛОК ПАРЛАМЕНТСКОЙ КУЛЬТУРЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 – “Политические институты и процессы, международные отношения”.

Защита состоится 18 декабря 2020 г., в 13:00 часов, на заседании специализированного совета 056 “Политология” ВАК РА, действующего по адресу ул. А. Манукяна 1, 0025, г. Ереван, Республика Армения.

Резюме

Целью данной диссертационной работы является выявление цивилизационных, аксиологических и институциональных измерений, определяющих статус-кво развития парламентской культуры, предполагающий разработку стратегии разития, ориентированной на будущее и рассматривая последнее как императив становления парламентской культуры и демократической консолидации.

Актуальность изучения процесса становления парламентской культуры в Республике Армения обусловлена необходимостью повышения функциональной эффективности парламента как доминантного института публичной власти, функциональная деятельность которой должна быть направлена на применение принципов нового гуманизма на основе триады «прошлое-настоящее-будущее».

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложения.

В первой главе - «Правовые и политические источники формирования парламентской культуры», вопросы определения, структуры и функциональное содержание парламентской культуры рассмотрены в контексте политического конституционализма, что дает возможность изучить функциональное взаимодействие конституционной и политической культур, а также тенденции их трансформации в процессе демократического транзита. Представлены результаты исследования армянского политического и политологического дискурса, целью которого является представление нового комплексного определения, отражающего действующие восприятия общества о роли и месте парламентской культуры в процессе консолидации демократических институтов.

Опираясь на комплексный подход к рассмотрению концепта парламентской культуры, в главе также проанализирована необходимость демократизации парламенсткой культуры как императива обеспечения эффективной политической коммуникации на основе обратной связи. В этом контексте рассмотрены вопросы

социализации и ресоциализации в процессе перехода к системе парламентской формы правления, которая требует переоценки роли «мягкой силы». Симбиоз социализации и ресоциализации обеспечивает непрерывную модернизацию и устойчивость социально-политической системы. Последние были рассмотрены как предпосылки преодоления вызовов линейной либерализации, «культурного насилия» и воспроизведения «гомо-советикуса».

Во второй главе - «Аксиологические предпосылки становления парламентской культуры в Республике Армения», был обоснован взаимодополняющий характер процессов становления парламентской культуры и демократической консолидации в рамках симбиотического взаимодействия структурных и акторно-ориентированных факторов политической системы. Данный подход позволяет оценить культурный статус-кво для дифференциации аксиологических и институциональных предпосылок демократизации парламентской культуры. Был реализован анализ характерных для постсоветских стран, в том числе и для Республики Армения, основных проблем процессов демократического транзита и консолидации, которые предопределяют модели функционирования политических институтов, а также динамику развития сознания и моделей поведения общества во времени и в пространстве.

На основе различных подходов к измерению функциональной эффективности парламента существующих в современной политической науке была предложена разработка Индекса демократизации парламентской культуры (ИПЦ) для выведения процесса преодоления проблем постсоветских стран на качественно новый этап. Это позволит оценить качество трансформации моделей поведения общества в течение эволюционного периода, учитывая не только избирательные процессы, но и восприятие гражданами парламента как института публичной власти, а также культуры сотрудничества парламентских институтов, правительства, политических партий и институтов гражданского общества. В главе также был произведен анализ развития парламентской культуры до институционализации государственного суверенитета в Армении (до 1918 г.), а также в контексте изучения опыта конституционной и политической культур в периоды Первой Республики и Социалистической Армении.

В третьей главе - «Основные задачи формирования парламентской культуры в Республике Армения», была представлена эволюция институциональных и конституционно-правовых преобразований в новых независимых постсоветских странах, а также трансформация роли парламента в процессе формирования парламентской культуры РА в рамках четырех волн институционализации государственной власти. В главе был рассмотрен опыт формирования политических

коалиций, образованных в результате президентско-парламентских выборов в современный период истории Армении. В этом контексте изучен опыт Литвы и Швеции по заключению политических соглашений или меморандумов о сотрудничестве с точки зрения эффективного взаимодействия между законодательной и исполнительной ветвями власти. На основе результатов представлен законопроект по заключению политического меморандума, направленного на развитие культуры сотрудничества и на закрепление политической ответственности парламентариев перед обществом.

Для выявления институциональных предпосылок становления парламентской культуры были рассмотрены роль политических партий и конституционно-правовые аспекты их деятельности, сравнительный анализ международного и армянского опыта парламенсткого контроля с точки зрения целевого управления государственными финансами, а также механизмы активации законадательной социализации парламентской элиты и гражданского общества с целью преодоления социально-политической нестабильности и ценностной неопределенности.

MAGDA ARSENYAN

PRECONDITIONS FOR THE ESTABLISHMENT OF PARLIAMENTARY CULTURE IN THE REPUBLIC OF ARMENIA

Dissertation under IG.00.02 – "Political Institutions and Processes, International Relations" aspiring to earn PhD in Political Science

The public defense will take place on December 18, 2020 at 13:00 at the Yerevan State University, at 056 "Political Science" HAC Specialized Chamber session (Address A. Manukyan str. 1, Yerevan 0025, Republic of Armenia)

Summary

The aim of the thesis is the the revelation of civilizational, axiological, and institutional dimensions determining the status-quo of the development of parliamentary culture, which assumes the formation of a future-oriented development strategy aimed at empowering democratic citizenship in accordance with the challenges of time. The latter serves as an imperative for the democratization of parliamentary culture and democratic consolidation.

The significance of studying the process of the formation of parliamentary culture in the Republic of Armenia is conditioned by the need to increase the functional efficiency of the parliament as the major institution of public power, the activity of which should be aimed at applying the principles of new humanism based on the "past-present-future" tripod.

The thesis consists of an introduction, three chapters, a conclusion, a list of references, and an annex.

In the first chapter, entitled "Legal and political sources for the formation of parliamentary culture", the definition, structure and functional perspectives of the development of parliamentary culture are considered in the context of political constitutionalism. It makes it possible to study the interaction of constitutional and political cultures, as well as the trends of their transformation in the process of democratic transition. The chapter presents the results of a study of the Armenian political discourse, aimed at proposing a new complex definition, which would reflect the citizens' perspectives about the role and place of parliamentary culture in the process of consolidation of democratic institutions.

Based on an integrated approach to the concept of parliamentary culture, the chapter also analyzes the need for democratization of parliamentary culture as an imperative to ensure effective political communication. In this context, the author considers the issues of socialization and resocialization in the process of transition to a parliamentary form of

government as a strong mechanism in terms of empowering the development of legal and political consciousness of the society. In this regard, the chapter justifies the reassessment of the role of "soft power" and public diplomacy at first inside the country. The symbiosis of socialization and resocialization processes ensure continuous modernization and stability of the socio-political system thus reducing the release of political necrophilia that leads to the formation of a constant threat of revolution. The above-mentioned processes are considered as prerequisites for overcoming the well-known crisis of political development, which are consequences of linear liberalization, "cultural violence" and the reproduction of "homo-sovieticus".

In the second chapter, entitled "Axiological preconditions for the formation of parliamentary culture in the Republic of Armenia", the complementary nature of the processes of the formation of parliamentary culture and democratic consolidation has been justified within the framework of symbiotic interaction of structural and actor-oriented factors of the political system. This approach allows us to assess the cultural status-quo and to differentiate the axiological and institutional preconditions for the democratization of parliamentary culture. The analysis was carried out of the main problems of the processes of democratic transition and consolidation, typical for the post-Soviet countries, including the Republic of Armenia, predetermining the operating models of political institutions, as well as the dynamics of the evolution of citizens' perspective in the period of neo-politics.

On the basis of various approaches to measuring the functional efficiency of the parliament existing in political science, the creation of the Democratization Index of Parliamentary Culture is proposed. It will make it possible to assess the quality of transformation of society's behavioral patterns during the evolutionary period, taking into account not only electoral processes but also the citizens' perspective of parliament as an institution of public power, as well as the cooperation culture between parliamentary institutions, government, political parties and civil society institutions.

The chapter also analyzes the development of parliamentary culture before the institutionalization of public authority in Armenia (until 1918), as well as in the context of studying the experience of constitutional and political cultures during the period of the First Republic and in Socialist Armenia.

The third chapter, entitled "The institutional preconditions of the development of parliamentary culture in the Republic of Armenia", represents the evolution of institutional and constitutional-legal transformations in the newly independent post-Soviet countries, as well as the transformation of the role of parliament within the framework of four waves of institutionalization of the RA's state power, proposed by the author. The chapter examines the experience of the formation of political coalitions as a result of presidential-parliamentary elections in the modern period of Armenian history. In this context, the

experience of Lithuania and Sweden in concluding political agreements or memorandums of cooperation from the point of view of effective interaction of the legislative and executive branches of government was studied. Based on the results of the latter, a draft law was presented to conclude a political memorandum aimed at developing a cooperative culture and fixing the political responsibility of parliamentarians to society.

In order, to identify the institutional preconditions for the formation of parliamentary culture, the chapter considers the role of political parties, constitutional and legal aspects of their activities, a comparative analysis of the international and Armenian experiences of parliamentary supervision, as well as mechanisms for boosting the legislative socialization of the parliamentary elite and civil society. These factors are vital in terms of overcoming socio-political nonstability and value uncertainty of a political system.